

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ Տ. ԴԱԻԹ ԱՐԶԵՊՍ. ՍԱՀԱԿԵԱՆԻ

9 Յուլիս, Չորեքշաբթի 1997, տեղի ունեցաւ Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեանի պարգեւատրումը, Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս Սթանիսլաս Լապուլէյի կողմէ “Արժանիքի Ազգային կարգի Ասպետի” շքանշանով, Դաւիթ Սրբազանի երկարամեայ, քաղաքական հովուական գործունէութեան համար Ֆրանսահայ գաղութին մէջ:

Շքանշանի տուուչութիւնը տեղի ունեցաւ Ֆրանսական Հիւպատոսարանի հիւրասրահին մէջ, ուր ներկայ էին տեղւոյս քաղաքապետարանէն, Կրօնից Նախարարութենէն, տարբեր կրօնական համայնքներէ, Պաղեստինեան իշխանութիւններէն եւ Հայ հասարակութենէն կոկիկ քաղաքական մը, ինչպէս նաեւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Մեծայարգ Հիւպատոսը, իր նառին մէջ, մատնանշեց այն սերտ հոգեւոր, մշակութային եւ քաղաքական կապերը, որոնք տեղի ունեցած են Ֆրանսացի ժողովուրդին եւ Հայ ժողովուրդին միջեւ, սկսեալ մանաւանդ Կիլիկեան շրջանէն, եւ յայտնեց թէ, այսօրուայ շքանշանը ստացողը, իր տարիներու ծառայութեան ընթացքին, մանաւանդ ի Ֆրանսա, ջանացած է այդ կապը ամրապնդել իր սահմանին մէջ:

Դաւիթ Սրբազան, իր նառին մէջ, շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսայի Բարձրապատիւ Նախագահ՝ Ժակ Շիրակին, եւ Մեծայարգ Ընդհանուր Հիւպատոսի՝ Սթանիսլաս Լապուլէյին, շքանշանով վարձատրուելուն առիթով, յիշեց Ֆրանսան՝ իբրեւ օրրանը հաւասարութեան, մարդկային արժանիքի եւ յառաջդիմութեան քաղաքականներուն, մանաւանդ Կիլիկեան շրջանէն ի վեր, սերտ յարաբերութիւններ մշակուեցան, իմաստասիրութեան, վաճառականութեան, կրօնական, մշակութային եւ քաղաքական մարզերու մէջ: Մեր վերջին Կիլիկեան թագաւորը՝ Լեւոն հինգերորդ, թաղուած է Ֆրանսա, Սեն-Տընիի թագաւորական գերեզմանատան մէջ, 1392-ին: Յիշեց Ֆրանսական մշակոյթի ազդեցութիւնը մեր ազգային շարժումներուն վրայ, մանաւանդ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մէջ, Շահան Պերպերեանի եւ Յակոբ Օշականի ուսուցումները, շաղախուած էին Ֆրանսական գրականութեամբ եւ Փիլիսոփայութեամբ, ներկայիս, այս աւանդութիւնը կը շարունակուի եւ կը զօրացուի, Ֆրանսայի Հայ գաղութի քաղաքականութեամբ եւ կենսունակութեամբ:

Յիշեց Հայերու մասնակցութիւնը, երկու համաշխարհային պատերազմներուն, Ֆրանսայի կողքին, առաջինին կոչուած էինք փոքր դաշնակիցներ, իսկ երկրորդին՝ զօրավար Շարլ Տը Կուլի կողքին, դիմադրութեան եւ ազատագրութեան տարիներուն:

Ապա, ներկաները հիւրասիրուեցան շամբանիայով եւ բոֆէլյով, անգամ մը եւս սերտացնելով պատմական կապերը երկու ժողովուրդներու միջեւ, նոյն գիշերը Նօթըր Դամի ֆրանսական նաշարանին մէջ, Դաւիթ Սրբազան ընթրիքով պատուեց ներկայացուցիչներ թիւով երեսուն հոգի:

Այս առթիւ, տեղի է յիշատակել որ Դաւիթ Սրբազան, 5 Յուլիսին, Գլխադրի Սուրբ Մատթան մէջ, քահանայական ձեռնադրութեան քառասնամեակին առթիւ, Ս. Պատարագ մատուցեց եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, իր հոգեւոր եւ մարմնաւոր ծնողներուն ի հանգիստ: Սոյն հանդիսութեանց, նախագահեց Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Սրբազան Հայրը:

ԱՆՈՒՇԱԿԱՆ Ծ. ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ